**Արձանագրություն N 7**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «15» նոյեմբերի 2016թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Խորեն Պետրոսյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

**Արման Հարությունյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/Մհմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում է՝

**Արթուր Թամրազյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ:

**1. Տեղեկատվություն՝ ներկայացրած հայտերում արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելու վերաբերյալ.**

1.1 Հանձնաժողովը ուսումնասիրել է 14.11.2016թ. «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ից www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով ստացված՝ Մրցույթի՝ ոչ ավտոմատ ծանուցումը:

Հանձնաժողովը որոշեց 11.11.2016թ. թիվ 6 որոշման 3-րդ կետով 1-ին և 5-րդ չափաբաժինների մերժման մասին կայացված որոշումը թողնել անփոփոխ:

1.2 «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում արձանագրված շտկման ենթակա անհամապատասխանությունները:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ Կարգ/ 46-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ի հայտը 2-րդ, 3-րդ, 4-րդ չափաբաժինների մասով գնահատել բավարար:

1.3 «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, «ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները: Ղեկավարվելով Կարգի 46-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի, «ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

**1-ին, 3-րդ, 4-րդ** չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ-ին:

**2-րդ** չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ին:

**5-րդ** չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ին:

2-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ-ին:

4-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:

1-ին, 3-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի գնման հայտով ապրանքների համար սահմանված առավելագույն կողմնորոշիչ գները:

5-րդ չափաբաժնի մասով բավարար գնահատված այլ հայտեր չկան:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**3. Հանձնաժողովի քարտուղարին.**

Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,

2) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016թ. նոյեմբերի 21-ը ներառյալ, ներկայացնել Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**4. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016թ. նոյեմբերի 23-ին, ժամը 10:00-ին:**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ — Կարեն Մելքոնյան

Անդամներ՝ — Կարեն Համբարձումյան

Խորեն Պետրոսյան

Արման Հարությունյան

Քարտուղար՝ — Արուս Խաչատրյան